ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-12/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 23.10.2019թ.
ժամը 11 ^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ Ա. Աատրյան,
Գնահատողներ՝
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ուստյան,
- ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության ՎՏԱ բաժնի պետ, Կ. Պողոսյան,
- ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության գլխավոր մասնագետ Գ. Դավթյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնի պետի տեղակալ Ա. Բաղրամյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-12/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-12/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4.Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-12/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Բաղրամյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար ծառայությունների մատուցման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-12/2» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում
1	Ա/Ձ Կարինե Գաբրիելյան
2	«ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ
3	«Կարիզա» ՍՊԸ
4	«ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ
5	«Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ
6	«Էյչ Գրուպ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 .«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-12/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Բաղրամյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին) և գնահատվել են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

29.10.2019թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Բաղրամյան)

3.1 Մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկները

Չ/հ	Ապրանքի անվանումը	Չ/մ	Քա-նակը	Նախահաշվ Գումարը ՀՀ դրամ	Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների առաջարկ			
					գրաված տեղը	անվանումները	գինը ՀՀ դրամ	
							առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	Հեռուստատարքեր	հատ	1	18000000	1	«Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ	13999990	16799988
					2	«ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ	14380000	17256000
					3	«Կարիզա» ՍՊԸ	16760000	16760000
					–	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	15500000	18600000
					–	«ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ	19800000	19800000
					–	Ա/Ձ Կարինե Գաբրիելյան	21000000	21000000

3.2 Մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-12/2» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետը, գների նվազեցման նպատակով 01.11.2019թ. ժամը 12:00-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՔՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) նշանակված են բանակցություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

01.11.2019թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

Հրավիրված բանակցությանը ներկայացել են «Իմպորտ Թրեյդ» և «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ները: Բանակցության արդյունքում պարզ դարձավ, որ «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ն գնային առաջարկը ներկայացրել է ներառյալ ԱԱՀ-ն, սակայն վերջինս տվյալ պահին չի հանդիսանում ԱԱՀ վճարող: Գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել բանակցության նիստը առաջացած հարցը քննարկելու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

04.11.2019թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

Քննարկելով «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ԱԱՀ-ով գնային առաջարկը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-դ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց ընդունել վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկը և ծանուցել «Իմպորտ Թրեյդ» և «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ներին բանակցության նիստի վերաբերյալ: Բանակցությունները կանցկացվեն 06.11.2019թ. ժամը 12:00-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՔՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5)

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

06.11.2019թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

Հրավիրված բանակցությանը ներկայացել են «Իմպորտ Թրեյդ» և «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ները: Նախքան բանակցության սկսվելը գնահատող հանձնաժողովը քննարկվեց 04.11.2019թ-ին «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունը պատվիրատուի ղեկավարին կապված «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի գնային առաջարկի վերաբերյալ և որոշեց հանձնաժողովի 04.11.2019թ-ին կայացրած որոշումը թողնել անփոփոխ և մասնակիցների հետ վարել բանակցություններ գների նվազեցման նպատակով:

Բանակցության արդյունքում «Իմպորտ Թրեյդ» և «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ները իրենց առաջարկած գները թողեցին անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-12/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Բաղրամյան)

4.1 **Հայտերի գնահատման օրը՝ 06.11.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-12/2»** ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-12/2»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցիների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Բաղրամյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Բաղրամյան)

6.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-12/2»** ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված՝ սույն ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Ա. Ասատրյան
Գնահատող	Գ. ՈՒստյան
Գնահատող	Կ. Պողոսյան
Գնահատող	Գ. Դավթյան
Գնումների համակարգող՝	Ա. Բաղրամյան